ԼԱԼԱ ՆԱՆՅԱՆ

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Անձի համակողմանի եւ ներդաշնակ զարգացման հիմնահարցը եղել ու մնում է որպես մանկավարժության հույժ կարեւոր խնդիրը, որը հնարավոր չէ կատարել առանց պատշաճ գեղագիտական դաստիարակության: Իր «Գեղեցկության իմաստությունը» ուշագրավ աշխատության մեջ Բ.Ն.Նեմենսկին իրավամբ գտնում է, որ խիստ անհրաժեշտ է ստեղծել դպրոցականների գեղագիտական դաստիարակության միասնական համակարգ, եւ «կոորդինացված երեք ուսումնական առարկաները՝ երաժշտությունը, կերպարվեստը, գրականությունը, պետք է կազմեն գեղագիտական դաստիարակության համակարգի ամուր հիմքը»:[1] Քանի որ գրական ստեղծագործությունները տարրական դասարաններում ուսուցվում են «Մայրենի լեզվի» դասերին, ուստի փոքրածավալ սույն հոդվածում փորձենք ցույց տալ, թե երաժշտության ու կերպարվեստի հետ ունեցած մայրենի լեզվի կապերը արդասավոր ինչպիսի դեր են կատարում կրտսեր դպրոցականների գեղագիտական զգացմունքների դաստիարակության գործընթացում:

Նախ նշենք, որ բարձրակարգ զգացմունքները մարդու շրջապատի առարկաների ու երեւույթների նկատմամբ ունեցած կենսական հարաբերությունների արտացոլումն են: Հոգեբանության մեջ տարբերակվում են բարձրակարգ զգացմունքների չորս տեսակ, դրանք են՝ գործնական զգացմունքներ (հունական prexis-գործ, արարք բառից), մտավոր զգացմունքներ (լատիներեն intellectus- միտք, հասկացում բառից), բարոյական զգացմունքներ (լատինական moralis-բարոյականություն բառից), գեղագիտական զգացմունքներ (հունական aithesis-զգայական բառից): Գեղագիտական են գեղեցիկի, վեհի, հերոսականի, կոմիկականի, ողբերգականի եւ այլ զգացմունքները, որոնք

[1] Նեմենսկի Բ.Մ. Գեղեցկության իմաստությունը (գեղագիտական դաստիարակության պրոբլեմների մասին), Երեւան, «Լույս» հր., 1987, էջ 234:

զարգանում են մյուս զգացմունքների հետ սերտորեն կապված: Եւ միանգամայն իրավացի է ականավոր մանկավարժ Ա.Ս.Մակարենկոն, ասելով, որ համակողմանի ու ներդաշնակ անձնավորություն դաստիարակելու համար ամենից առաջ նրա մեջ պետք է զարգացնել փոխկապակցված մարդկային բարձրակարգ զգացմունքներ. «Ես համոզված եմ նրանում, որ եթե ինչպես հարկն է չենք դաստիարակում մարդկային զգացմունքներ, ապա մենք ոչինչ չենք դաստիարակում»:[1]

Մարդու մեջ գեղագիտական զգացմունքներ են առաջանում հատկապես բնության, արվեստի, գրական երկերի եւ մարդկանց վարքը գեղեցկությունների ներգործությամբ. «Մարդիկ կյանքի տարբեր փաստերը եւ արվեստի մեջ դրանց արտացոլումները գնահատում են որպես գեղեցիկ կամ այլանդակ, ողբերգական կամ կոմիկական, վսեմ կամ ճղճիմ, վայելչագեղ կամ կոպիտ»:[2] Գեղագիտական այդ զգացմունքները դրսեւորվում են հատկապես գեղագիտական գնահատականներում:

Կրտսեր դպրոցականների գեղագիտական զգացմունքների զարգացմանը մեծապես նպաստում են «Մայրենի լեզվի» դասագրքերում զետեղված շատ ստեղծագործություններ: Նկատի ունենք հատկապես Հովի. Թումանյանի «Կանաչ ախպեր», «Գետակը», «Ծաղիկների երգը», Ղ. Աղայանի «Աշուն», «Չորս եղանակ», «Այդ ե՞րբ է լինում», «Ձմեռ», Վ. Տերյանի «Գարուն», Ավ. Իսահակյանի «Գարնան օրեր», Աթ. Խնկոյանի «Ծիծեռնակին», Գ. Դոդոխյանի «Ծիծեռնակ», եւ բազմաթիվ այլ բանաստեղծություններ, որոնցից շատերը երգի են վերածված (որն էլ դյուրին է դարձնում տարրական դասարաններում միջառարկայական կապեր ստեղծելը գրականության եւ երաժշտության միջեւ): Որպես բնորոշ օրինակ վկայակոչենք Հովի. Թումանյանի «Կանաչ ախպեր» անզուգական բանաստեղծությունը, որին գեղարվեստական հատուկ երանգ են տալիս մեր կողմից ընդգծված գեղեցիկ ու տարողունակ մակդիրները.

Է՜յ <u>կանաչ</u> ախպեր,
Է՜յ <u>ճանաչ</u> ախպեր,
Արի՛, քեզ հետ բեր

---

[1] А.С. Макаренко, Соч., Т. 7, 1952, с. 311.
[2] Ընդհանուր հոգեբանություն (պրոֆ. Ա.Վ.Պետրովսկու խմբ.), Ե՛, «Լույս» հր., 1974, էջ 450:

Արեւի շողեր,
Բեր անուշահոտ
Ծիլ, ծաղիկ ու խոտ,
Կարկաչուն վըտակ,
Երկինք կապուտակ,

Կենսաթրթիռ այս բանաստեղծության մեջ գեղեցիկ մակդիրների շարքում կրկնվում են հատկապես «կանաչը» եւ «ճանաչը», որոնց հիման վրա էլ նույնիսկ առաջին դասարանցիները կռահում են, որ «կանաչ ու ճանաչ ախպերը» հենց իրենց սիրելի «ծաղկազարդ գարունն է»:

Հանրահայտ է այն իրողությունը, որ հայ գրականության մեջ ծիծեռնակը դիտվել է որպես գարնան մունետիկ եւ այդ կապակցությամբ ստեղծվել են բազմաթիվ հիասքանչ բանաստեղծություններ: Ահա Գ.Դոդոխյանի «Ծիծեռնակ» բանաստեղծությունը, որը 2-րդ դասարանցիները ոչ միայն արտահայտիչ արտասանում են, այլեւ երգում (երաժշտ. Կոմիտասի), ստանալով գեղագիտական հաճույք.

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու գարնան սիրուն թռչնակ.
Դեպի ու՞ր, ինձ ասա,
Թռչում ես այդպես արագ:
Անդ շինիր քո բույնը
Հայրենի կտուրի տակ...

Տարրական դասարանների «Մայրենի լեզվի» դասագրքերում լայն տեղ են գրավում հայրենիքին ու մայրենի լեզվին նվիրված գեղարվեստորեն լիարժեք բանաստեղծությունները, որոնք գեղեցիկի, վեհի, հերոսականի գեղագիտական զգացմունքներ են առաջացնում կրտսեր դպրոցականների մեջ: Նկատի ունենք Միք. Նալբանդյանի «Մեր հայրենիք», Ավ. Իսահակյանի «Հե՞յ ջան Հայրենիք», Հովհ. Շիրազի «Իմ սուրբ Հայրենիք», Ս. Կապուտիկյանի «Իմ հայ լեզու», Պ. Սեւակի «Հայաստան» եւ այլ բանաստեղծություններ: Օրինակ 3-րդ դասարանում Միք. Նալբանդյանի «Մեր Հայրենիք» բանաստեղծությունն ուսումնասիրելիս աշակերտները նաեւ ուրախության զգացում ապրեցին, իմանալով որ մեր հանրապետության հիմնը ստեղծվել է հայրենասիրական շնչով գրված Միք. Նալբանդյանի «Մեր հայրենիք» երգ- բանաստեղծության (երաժշտ. Բ.Կանաչյանի) հիման վրա:

Հայրենիքի եւ ազգի գաղափարը անբաժանելի է մայրենի լեզուն սիրելու եւ պահպանելու գաղափարից. դա արտացոլված է ազգապահպան մայրենի լեզվին նվիրված բազմաթիվ բանաստեղծություններում: 2-րդ դասարանի «Մայրենի լեզվի» դասագրքում զետեղված Ս. Կապուտիկյանի «Իմ հայ լեզու» գեղեցիկ բանաստեղծությանը գեղարվեստական հատուկ երանգ է տալիս յուրաքանչյուր տան սկզբում կրկնվող

«Իմ հա՛յ լեզու, իմ մա՛յր լեզու

Իմ լու՛յսն ես դու, իմ ուժն ես դու» երկտողը:

Կրտսեր դպրոցականների գեղագիտական զգացմունքների զարգացմանը մեծապես նպաստում են գեղարվեստական արձակ երկերը, հեքիաթները, որոնք հանձնարարվում են նաեւ արտադասարանական ընթերցանության համար:

Հսկայական է գեղագիտական զգացմունքների դերը նաեւ տարրական դասարաններում ուսուցումը օպտիմալացնելու գործընթացում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հաճելի հույզերն ու գեղագիտական զգացմունքները մեծապես նպաստում են ուսուցանվող նյութը խորը յուրացնելուն: Այս առումով ուսանելի է բուլղարացի հոգեբան-մանկավարժ Գ. Լոզանովի այն մեթոդը, երբ տարրական դասարաններում ուսուցումը արդյունավետ է դարձնում դերային խաղերի, երգերի, պարի եւ գեղարվեստական այլ միջոցներով: Խորհուրդ կտայինք տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչներին ստեղծագործաբար գործադրելու այդ մեթոդը:

Բարձրակարգ զգացմունքները անձի բարոյագեղագիտական եւ սոցիալական հասունության յուրօրինակ ցուցանիշներ են: Հոգեբան Ա.Ա. Նալչաջյանը իրավացիորեն մատնանշում է. «Անձի սոցիալ-հոգեբանական հասունության հիմնական չափանիշներից մեկը նրա բարձրագույն զգացմունքների զարգացման բարձր աստիճանն է, մասնավորապես՝ գեղագիտական զգացմունքների զարգացման բարձր մակարդակը»[1]: Ահա թե ինչու եւ դպրոցը, եւ ընտանիքը պատշաճ ուշադրություն պետք է դարձնեն դպրոցականների դաստիարակության հիմնահարցին:

---

1. Ա. Նալչաջյան, Հոգեբանության հիմունքներ, 1997, էջ 462: